



Ուղեցույց

Կիներու իրաւունքները

Յունուար, 2020թ.

Սոյն ուղեցույցը հովանաւորուած է Ամերիկայի Միացեալ Նահանգներու պետական քարտուղարութեան Հանրութեան հետ կապերու գրասենեակի տրամադրած դրամաշնորհի շրջանակէն ներս: Այստեղ արտայայտուած է հեղինակի դիրքորոշումը, որուն համընկնումը Ամերիկայի Միացեալ Նահանգներու պետական քարտուղարութեան դիրքորոշումին հետ՝ պարտադիր չէ:

1. Արդեօք ՀՀ-ի մէջ կիներ եւ այր մարդիկ ունի՞ն հաւասար իրաւունքներ

ՀՀ Սահմանադրութեամբ ամրագրուած է, որ կիներ եւ այր մարդիկ իրաւահաւասար են: Սեռէն կախեալ խտրականութիւնը կ'արգիլուի:

2. Ի՞նչ կը նշանակէ կիներու նկատմամբ խտրականութիւնը

Կիներու նկատմամբ խտրականութիւնը կը նշանակէ սեռի հիմքով որեւէ տարբերակում, բացառում կամ սահմանափակում, որ նպատակ ունի կիներու համար սահմանափակել կամ վերացնել քաղաքական, տնտեսական, ընկերային, մշակութային, քաղաքացիական կամ որեւ այլ բնագաւառի մէջ, այր մարդոց եւ կիներու, անկախ անոնց ամուսնական կարգավիճակէն, հաւասարութեան հիմքով, մարդու իրաւունքներու ու հիմնարար ազատութիւններու ճանաչումը եւ կիներու կողմէն այդ իրաւունքներու եւ ազատութիւններու իրականացումը կամ անոնցմէ օգտուիլը:

3. Ո՞ր պարագային կիներու եւ այր մարդոց յարաբերութիւններու կարգաւորման հարցերուն մէջ տարբերութիւններու սահմանումը չի համարուիր սեռային խտրականութիւն

Սեռային խտրականութիւն չեն՝

- կիներու եւ այր մարդոց յարաբերութիւններու կարգաւորման հարցերուն մէջ տարբերութիւններու սահմանումը՝ պայմանաւորուած յղութեամբ եւ ծննդաբերութեամբ, երեխայի խնամքով եւ կուրծքով կերակրելով.
- այր մարդոց պարտադիր զինուորական կամ այլընտրանքային ծառայութեան անցնիլը.
- կիներու եւ այր մարդոց աշխատանքի պահպանման առանձնայատկութիւնները՝ կապուած անոնց վերարտադրողական առողջութեան պահպանման հետ.
- մասնագիտական որակաւորման ներկայացուող պահանջներու սահմանումը՝ հիմնուած պարտականութիւններու՝ միայն որոշակի սեռի անձերու, կատարման հնարաւորութեան վրայ.
- այն տարբերութիւններու սահմանումը, որ պայմանաւորուած է տարբեր սեռերու կենսաբանական առանձնայատկութեամբ:

4. Ի՞նչ իրաույնքներ ունին կիները երկրի քաղաքական ու հասարակական կեանքին մեջ

Երկրի քաղաքական ու հասարակական կեանքին մեջ կիներու համար, այր մարդոց հետ հաւասար պայմաններով, կ'ապահովեն հետեւեալ իրաույնքները.

- Քուէարկելու բոլոր ընտրութիւններու եւ հանրաքուէներու մեջ, ընտրուելու բոլոր պետական ընտրովի մարմիններուն մեջ,
- մասնակցելու կառավարութեան քաղաքականութեան ձեւաւորման ու իրականացման եւ կառավարման բոլոր մակարդակներով ստանալու պետական պաշտօններ եւ իրականացնելու պետական բոլոր գործառոյթները,
- մասնակցելու երկրի հասարակական ու քաղաքական կեանքին առնչուող հասարակական կազմակերպութիւններուն եւ միաւորումներուն գործունէութեան:

5. Ինչպիսի՞ երաշխիքներ կը գործեն հանրային ծառայութեան մեջ կիներու եւ այր մարդոց հաւասարութիւնը պահպանելու համար

Կիներ եւ այր մարդիկ հանրային ծառայութեան ընդունուելու եւ մասնագիտական գործունէութիւն իրականացնելու համար ունին հաւասար իրաույնքներ, պարտականութիւններ, պատասխանատուութիւն եւ հաւասար հնարաւորութիւններ:

Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտօնատար անձերը պարտաւոր են ապահովել կիներու եւ այր մարդկանց՝ հանրային ծառայութեան ընդունուելու հաւասար հնարաւորութիւններ՝ իրենց ընդունակութիւններուն եւ մասնագիտական պատրաստուածութեան համապատասխան:

Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններու աշխատակազմերուն մեջ աշխատողներուն պաշտօններ տալու ժամանակ, աշխատանքային յառաջխաղացում կամ մասնագիտական գիտելիքներու եւ աշխատանքային ունակութիւններու կատարելագործման նպատակով վերապատրաստման, ուսուցման գործուղում իրականացնելու ատեն կը բացառուին սեռային խտրականութեան դրսեւորումները:

Կիներ եւ այր մարդիկ հանրային ծառայութեան թափուր պաշտօններու համալրման իրաւունք ունին մասնակցելու օրէնքով սահմանուած կարգով՝ հաւասարապէս եւ հաւասար պայմաններու մէջ:

Կ'արգիլուի միայն մէկ սեռի անձերու համար հանրային ծառայութեան ընդունուելու մրցոյթներ յայտարարելը, բացառութեամբ այն պարագաներուն, երբ ատիկա ուղղակիօրէն կը բխի այլ անձերու իրաւունքներու եւ շահերու պաշտպանութենէն:

6. Ի՞նչը ընտանիքի մէջ բռնութիւն է

Ընտանիքի մէջ բռնութիւն կը նկատուի ֆիզիքական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բնոյթի բռնի արարքը, ինչպէս նաեւ անտեսումը, որ կատարուած է ընտանիքի անդամներուն միջեւ:

7. Որո՞նք են ընտանիքին մէջ կնոջ նկատմամբ դրսեւորուող բռնութեան տեսակները

Ընտանիքին մէջ կնոջ նկատմամբ դրսեւորուող բռնութեան տեսակներն են՝

- ֆիզիքական բռնութիւն՝ ծեծը եւ այլ բռնի գործողութիւնները, դիտաւորութեամբ առողջութեան վնաս պատճառելը, ազատութենէն ապօրինի զրկելը, դիտաւորութեամբ ֆիզիքական ուժեղ ցաւ պատճառելը.
- սեռական բռնութիւն՝ բռնաբարութիւնը, սեռական բնոյթի բռնի գործողութիւնները, սեռական յարաբերութեան կամ սեռական բնոյթի գործողութիւններուն հարկադրելը եւ այլն.
- հոգեբանական բռնութիւն՝ դիտաւորութեամբ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, ինչպէս նաեւ՝ ֆիզիքական, սեռական կամ տնտեսական բռնութիւն գործադրելու իրական սպառնալիքը, դիտաւորութեամբ պարբերաբար այնպիսի գործողութիւններ կատարելը, որոնք անձի մէջ հիմնաւոր վախ կը յարուցեն իր կամ ընտանիքի անդամի անձնական անվտանգութեան սպառնացող վտանգի մասին, արժանապատուութեան պարբերական նուաստացումը, ընկերային ծայրայեղ մեկուսացումը, յղութեան արհեստական ընդհատման հարկադրանքը.
- տնտեսական բռնութիւն՝ անձին հարկադրուած նիւթական կախուածութիւն ստեղծելու կամ իշխելու նպատակով անոր գոյութեան անհրաժեշտ միջոցներէն

(սնունդ, հագուստ, կացարան, դեղորայք) զրկելը, սեփականության կամ ընդհանուր սեփականության իրաւունքով պատկանող գոյքը տնօրինելու, տիրապետելու եւ օգտագործելու իրաւունքները ոչ իրաւաչափ սահմանափակելը, անձի կրթութիւն ստանալու կամ աշխատանքի ընտրութեան ազատութեան իրաւունքները սահմանափակելը:

8. Ո՞ր պարագային կինը կը նկատուի ընտանիքի մէջ բռնութեան ենթարկուած

Կինը կը նկատուի ընտանիքի մէջ բռնութեան ենթարկուած՝ այն պարագային, եթէ ըստ նախազգուշացման, անյետաձգելի միջամտութեան, պաշտպանական որոշումի կամ դատարանի՝ օրինական ուժի մէջ մտած դատավճիռի, տուժած է ընտանիքի մէջ բռնութենէն:

9. Որո՞նք են ընտանիքին մէջ բռնութեան ենթարկուած անձերու պաշտպանութեան միջոցները

Ընտանիքին մէջ բռնութեան ենթարկուած անձերու պաշտպանութեան միջոցներն են՝

1) նախազգուշացումը, որ կը կիրառուի այն պարագային, երբ ոստիկանութիւնը ընտանիքի մէջ բռնութեան դէպք յայտնաբերած է առաջին անգամ, կատարուած արարքը յանցակազմի յատկանիշներ առերեւոյթ չի պարունակեր, եւ անյետաձգելի միջամտութեան հիմքերը առկայ չեն:

2) անյետաձգելի միջամտութեան որոշումը, որ կը կիրառուի այն պարագային, եթէ ընտանիքի մէկ անդամը միւսի նկատմամբ բռնութիւն կիրառած է, եւ առկայ է հիմնաւոր ենթադրութիւն բռնութեան կրկնման կամ շարունակման անմիջականօրէն սպառնացող վտանգի մասին, ապա ընտանիքի միւս անդամի կեանքի եւ առողջութեան ապահովման նպատակով ոստիկանութեան իրաւասու ծառայողը անյապաղ կը կայացնէ անյետաձգելի միջամտութեան որոշում: Անյետաձգելի միջամտութեան որոշում կրնայ կայացուիլ նաեւ այն պարագային, երբ նախազգուշացում ստանալէն ետք՝ մէկ տարուան մէջ անձը կատարած է այնպիսի բռնի արարք, որ չի պարունակեր յանցակազմի յատկանիշներ:

3) պաշտպանական որոշումը, որ կը կայացուի դատարանի կողմէ ընտանիքի մէջ բռնութեան ենթարկուած կամ ենթադրաբար ենթարկուած անձի կամ անոր համաձայնութեամբ՝ աջակցութեան կենտրոնի ներկայացուցած դիմումին հիման վրայ:

10. Պաշտպանական որոշումին վերաբերեալ գործերը ո՞ր դատարանին է ընդդատեալ

«Ընտանիքին մէջ բռնութեան կանխարգելման, ընտանիքին մէջ բռնութեան ենթարկուած անձերու պաշտպանութեան եւ ընտանիքին մէջ համերաշխութեան վերականգնման մասին» օրէնքով նախատեսուած պաշտպանական որոշումին վերաբերեալ հայցադիմումը կը ներկայացուի ընտանիքին մէջ բռնութեան ենթարկուած կամ ենթադրաբար ենթարկուած անձի բնակութեան վայրին կամ վերջինիս համաձայնութեամբ հայցադիմում ներկայացնող աջակցութեան կեդրոնին գտնուած վայրին առաջին ատեանի դատարան:

11. Որո՞նք են ընտանիքի մէջ բռնութեան կանխարգելումի եւ ընտանիքի մէջ բռնութեան ենթարկուած անձերու պաշտպանութեան գործառոյթներ իրականացնող մարմինները

Ընտանիքի մէջ բռնութեան կանխարգելումը եւ ընտանիքի մէջ բռնութեան ենթարկուած անձերու պաշտպանութիւնը իրենց գործառոյթներու շրջանակներուն մէջ կ'իրականացնեն՝

1) ընկերային հարցերու ոլորտին մէջ լիազօր՝ հանրապետական գործադիր մարմինը (ՀՀ աշխատանքի եւ ընկերային հարցերու նախարարութիւնը).

2) ոստիկանութիւնը.

3) կրթութեան ոլորտի լիազօր հանրապետական գործադիր մարմինը.

4) առողջապահութեան ոլորտի լիազօր հանրապետական գործադիր մարմինը.

5) խնամակալութեան եւ հոգաբարձութեան մարմինները.

6) ընտանիքի մէջ բռնութեան ենթարկուածներուն աջակցութիւն ցոյց տուող յատուկ կառոյցները՝

ա. աջակցութեան կեդրոնները,

բ. պատսպարանները:

12. Ո՞ր պարագային կինը կրնայ դիմել Հանրային պաշտպանի գրասենեակ իրաւաբանական անվճար օգնութիւն ստանալու համար

Հանրային պաշտպանի գրասենեակը իրաւաբանական անվճար օգնութիւն կը տրամադրէ այն կիներուն, որոնք «Ընտանիքի մէջ բռնութեան կանխարգելման, ընտանիքի մէջ բռնութեան ենթարկուած անձերու պաշտպանութեան եւ ընտանիքի մէջ համերաշխութեան վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետութեան օրէնքի համաձայն ընտանիքին մէջ ենթարկուած են բռնութեան:

13. Ի՞նչ փաստաթուղթեր պէտք է ներկայացնէ ընտանիքի մէջ բռնութեան ենթարկուած կինը իրաւաբանական անվճար օգնութիւն ստանալու համար

«Ընտանիքի մէջ բռնութեան կանխարգելման, ընտանիքի մէջ բռնութեան ենթարկուած անձերու պաշտպանութեան եւ ընտանիքի մէջ համերաշխութեան վերականգնման մասին» ՀՀ օրէնքի համաձայն ընտանիքի մէջ բռնութեան ենթարկուած անձը իրաւաբանական անվճար օգնութիւն ստանալու համար հանրային պաշտպանի գրասենեակ պէտք է ներկայացնէ «Ընտանիքի մէջ բռնութեան կանխարգելման, ընտանիքի մէջ բռնութեան ենթարկուած անձերու պաշտպանութեան եւ ընտանիքի մէջ համերաշխութեան վերականգնման մասին» ՀՀ օրէնքի համաձայն տրուած՝ նախազգուշացման, անյետաձգելի միջամտութեան, պաշտպանական որոշումը կամ դատարանի՝ օրինական ուժի մէջ մտած դատավճիռը՝ ընտանիքի մէջ բռնութենէ տուժելու մասին, ինչպէս նաեւ անձը հաստատող փաստաթուղթը:

14. Արդե՞ք ընտանիքի մէջ կիներ եւ այր մարդիկ իրաւահաւասար են

Ընտանիքի մէջ կիներ եւ այր մարդիկ ունին հաւասար իրաւունքներ: Ամուսիններէն իւրաքանչիւրը ազատ է աշխատանք, զբաղում, մասնագիտութիւն, բնակութեան վայր ընտրելու: Երեխաներու դաստիարակութեան եւ կրթութեան, ինչպէս նաեւ ընտանեկան կեանքի այլ հարցերը ամուսինները կը լուծեն համատեղ՝ ելլելով ամուսիններու իրաւահաւասարութեան սկզբունքէն:

15. Ինչպիսի՞ իրաւունքներ ունին կիներ ամուսնութեան եւ ընտանեկան յարաբերութիւններուն վերաբերող հարցերու մէջ

Կիներ այր մարդոց հետ հաւասար ունին՝

- ամուսնութեան միեւնոյն իրաւունքը,

- ամուսինի ազատ ընտրության եւ միայն իր ազատ ու լիակատար համաձայնությամբ ամուսնանալու միեւնոյն իրաւունքը,
- ամուսնութեան ընթացքին եւ ամուսնալուծուելու ատեն միեւնոյն իրաւունքներն ու պարտականութիւնները,
- այր մարդոց եւ կիներու համար միեւնոյն իրաւունքներն ու պարտականութիւնները որպէս ծնողներ՝ անկախ անոնց ամուսնական կարգավիճակէն իրենց երեխաներուն վերաբերող հարցերուն մէջ,
- զուակներու թիւի եւ անոնց ծնունդի միջեւ ընկած ժամանակամիջոցի հարցը ազատօրէն ու պատասխանատուութեամբ լուծելու միեւնոյն իրաւունքը եւ այդ իրաւունքները իրականացնելու հնարաւորութիւն ընձեռող տեղեկատուութիւն, կրթութիւն եւ միջոցներ ստանալու իրաւունքը,
- երեխաներու խնամակալութեան, հոգաբարձութեան եւ որդեգրման կամ համանման գործառոյթներ իրականացնելու միեւնոյն իրաւունքներն ու պարտականութիւնները,
- միեւնոյն անձնական իրաւունքները՝ իբրեւ ամուսին եւ կին, ինչպէս նաեւ՝ մականունի, մասնագիտութեան եւ զբաղումի ընտրութեան իրաւունքը,
- ամուսիններու հաւասար իրաւունքները գոյքի սեփականութեան, ձեռքբերման, տիրապետման, կառավարման, անոնցմէ ինչպէս անվճար, այնպէս ալ վարձով օգտուելու եւ զանոնք տնօրինելու կապակցութեամբ:

16. Արդեօք կ'ինը ունի՞ սեփականութեան իրաւունք ամուսնութեան ընթացքին ամուսինին կողմէ ձեռք բերուած գոյքի նկատմամբ

Կ'ինը ունի համատեղ սեփականութեան իրաւունք ամուսնութեան ընթացքին ամուսինին կողմէ ձեռք բերուած գոյքի նկատմամբ, եթէ այլ բան նախատեսուած չէ օրէնքով կամ անոնց միջեւ կնքուած պայմանագիրով: Մինչեւ ամուսնութիւնը ամուսիններէն իւրաքանչիւրի գոյքը, ինչպէս նաեւ ամուսնութեան ընթացքին ամուսիններէն մէկուն նուէրը կամ ժառանգութիւն ստացած գոյքը կը նկատուի անոր սեփականութիւնը:

17. Ո՞ր պարագային կ'ինը իրաւունք ունի ամուսնէն պահանջել վճարել ապրուստի միջոց

Ամուսինները պարտաւոր են նիւթապէս օժանդակել իրարու: Կինը իրաւունք ունի սննդագին վճարելու անհրաժեշտ միջոցներ ունեցող ամուսինէն դատական կարգով պահանջել վճարել սննդագին հետեւեալ պարագաներուն՝

ա) անաշխատունակ անապահով ըլլալու պարագային,

բ) յղութեան ընթացքին, ինչպէս նաեւ ընդհանուր զուակը խնամելու պարագային մինչեւ անոր երեք տարին լրանալը.

գ) եթէ կինը անապահով է եւ կը խնամէ ի ծնէ հաշմանդամ կամ առաջին խումբի հաշմանդամ չափահաս ընդհանուր զուակը

18. Ո՞ր պարագային ամուսինը չի կրնար ամուսնալուծութեան դիմում ներկայացնել

Ամուսինը, առանց կնոջ համաձայնութեան, իրաւունք չունի ամուսնալուծութեան դիմում ներկայացնելու կնոջ յղութեան ընթացքին:

19. Որո՞նք ունին մայրութեան նպաստի իրաւունք

Մայրութեան նպաստի իրաւունք ունին՝

1) գործատուներու հետ աշխատանքային յարաբերութիւններու մէջ գտնուող ֆիզիքական անձերը (վարձու աշխատողներ).

2) անհատ ձեռնարկատէրերը, նոտարները (ինքնուրոյնաբար իրենց աշխատանքով ապահովուած անձերը).

3) Հայաստանի Հանրապետութեան բնակչութեան վայրի հասցեով հաշուառուած՝ յղութեան եւ ծննդաբերութեան արձակուրդի իրաւունք ունենալու ժամանակահատուածի առաջին օրուան դրութեամբ վարձու աշխատող կամ ինքնուրոյնաբար իրեն աշխատանքով ապահովուած անձ չհանդիսացող անձը (չաշխատող անձ):

20. Զաշխատող կինը ի՞նչ փաստաթուղթեր պէտք է ներկայացնէ մայրութեան նպաստ ստանալու համար

Չաշխատող անձին մայրութեան նպաստ կը նշանակուի մայրութեան նպաստի իրաւունք ունեցող անձի դիմումը եւ անհրաժեշտ փաստաթուղթերը Հայաստանի Հանրապետութեան աշխատանքի եւ ընկերային հարցերու նախարարութեան ընկերային ապահովութեան պետական ծառայութեան տարածքային կեդրոն ներկայացուելէն ետք՝ մէկամսեայ ժամկէտի մէջ:

Նպաստը նշանակելու համար դիմողը տարածքային կեդրոն կը ներկայացնէ՝ դիմում, ուր ներառուած են՝

- դիմողի անունը, մականունը, անձը հաստատող փաստաթուղթի շարքը եւ թիւը, բնակութեան (հաշուառման) վայրի հասցէն,
- շահառուի (չաշխատող կնոջ) անունը, մականունը, անձը հաստատող փաստաթուղթի շարքը եւ թիւը, հանրային ծառայութիւններու համարանիշը (հանրային ծառայութիւններու համարանիշ չստանալու մասին տեղեկանքի թիւը, եթէ հրաժարած է հանրային ծառայութիւններու համարանիշ ստանալէն), բնակութեան (հաշուառման) վայրի հասցէն,
- շահառուի դրամատնային հաշուի համարը կամ այն դրամատունը, ուրկէ շահառուն կը փափաքի ստանալ մայրութեան նպաստի գումարը.
- դիմողի եւ շահառուի անձը հաստատող փաստաթուղթերը, շահառուի հանրային ծառայութիւններու համարանիշ չստանալու մասին տեղեկանքը, եթէ շահառուն հրաժարած է հանրային ծառայութիւններու համարանիշ ստանալէն.
- Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան սահմանած կարգով բժշկական կազմակերպութեան տուած ժամանակաւոր անաշխատունակութեան թերթիկը.
- Հայաստանի Հանրապետութեան օրէնսդրութեամբ սահմանուած ծննդօգնութեան պետական հաւաստագիրը, իսկ եթէ դիմումը ներկայացուած է մանուկի ծնունդէն ետք՝ ծննդօգնութեան պետական հաւաստագրի պատճենը (վաւերացուած այն բժշկական կազմակերպութեան կնիքով եւ տնօրէնի ստորագրութեամբ, ուր ծննդաբերած է յղին) եւ երեխայի ծնունդի պետական գրանցման փաստը հաստատող փաստաթուղթը (ծննդեան վկայական, մանուկին ծնունդի պետական գրանցման փաստը հաստատող այլ փաստաթուղթ կամ մահուան վկայական).
- շահառուի ստորագրած յայտարարութիւնը՝ յղութեան եւ ծննդաբերութեան արձակուրդի իրաւունք ունենալու ժամանակահատուածի առաջին օրուան

դրութեամբ՝ օրէնքով սահմանուած վարձու աշխատող կամ ինքնուրոյնաբար իրեն աշխատանքով ապահոված անձ չհանդիսանալու մասին (յայտարարութիւնը կը ներառէ նաեւ շահառուի անունը, մականունը, անձը հաստատող փաստաթուղթի շարքն ու թիւը, յայտարարութիւնը տալու ամսաթիւր, ամիսը, տարեթիւր): Յայտարարութիւնը կրնայ շարադրուիլ նաեւ ազատ ոճով:

21. Արդեօք օտարերկրացիի հետ ամուսնութիւնը, ամուսնալուծութիւնը կամ ամուսնութեան ընթացքին ամուսնոյն կողմէ քաղաքացիութիւնը փոխելը կ'ազդէ՞ն կնոջ քաղաքացիութեան վրայ

Օտարերկրացիի հետ ամուսնութիւնը, ամուսնալուծութիւնը, ամուսնութեան ընթացքին ամուսնոյն կողմէ քաղաքացիութիւնը փոխելը ինքնաբերաբար չեն ազդեր կնոջ քաղաքացիութեան վրայ: Ամուսնոյն կողմէ որեւէ պետութեան քաղաքացիութիւն կամաւոր ձեռքբերումը, քաղաքացիութենէն հրաժարումը չեն խոչընդոտեր այդ քաղաքացիին կինը՝ պահպանելու իր քաղաքացիութիւնը, չեն վերածեր զայն քաղաքացիութիւն չունեցող անձի եւ չեն կրնար զայն ստիպել ընդունելու ամուսինին քաղաքացիութիւնը: Կիներ այր մարդոց հետ հաւասար իրաւունքներ ունին իրենց զաւակներու քաղաքացիութեան առնչութեամբ:

22. Արդեօք գործատուն կրնա՞յ սեռի հետ պայմանաւորուած խտրականութիւն դրսեւորել եւ կիները չընդունել աշխատանքի

Աշխատանքի ընդունման յայտարարութիւններու մէջ (մրցոյթներուն մէջ) եւ աշխատանքային յարաբերութիւններու իրացման ընթացքին արգիլուած է գործնական յատկանիշներէն եւ մասնագիտական պատրաստուածութենէն ու որակաւորումէն բացի, խտրականութեան հիմք հանդիսացող որեւէ այլ պայման սահմանելը, բացառութեամբ եթէ ստիկա կը բխի աշխատանքին ներյատուկ պահանջներէն:

23. Կրնա՞յ արդեօք գործատուն կնոջ յղութեան շարժադիթով հրաժարիլ զայն աշխատանքի ընդունելէն կամ անհիմն ազատել աշխատանքէն

Կ'արգիլուի յղի կինը կամ մինչեւ երեք տարեկան երեխայ ունեցող անձը աշխատանքի ընդունելէն անհիմն հրաժարեցնելը կամ աշխատանքէ ազատելը:

Յղի կինը յղութեան շարժառիթով կամ մինչեւ երեք տարեկան երեխայ ունեցող անձը այդ շարժառիթով աշխատանքէն անհիմն հրաժարեցնելը կամ աշխատանքէն անհիմն ազատելը կը նկատուի յանցագործութիւն եւ կը պատժուի տուգանքով՝ նուազագոյն աշխատավարձի երկուհարիւրապատիկէն հինգհարիւրապատիկի չափով, կամ կալանքով՝ առաւելագոյնը մէկ ամիս ժամկետով:

24. Արդեօք գործատուն կրնա՞յ նոյն աշխատանքին համար կին աշխատողը վարձատրել աւելի քիչ, քան արական սեռի աշխատողը

Կ'արգիլուի միեւնոյն կամ համարժեք աշխատանքի դիմաց տարբեր վարձատրութիւնը, աշխատանքի վարձատրութեան ցանկացած փոփոխութիւնը (բարձրացում կամ իջեցում) կամ աշխատանքի պայմաններու վատթարացումը սեռի յատկանիշով պայմանաւորուած:

Աշխատանքներու որակաւորման համակարգի կիրառման պարագային միեւնոյն չափանիշները պետք է կիրառուին ինչպէս այր մարդոց, այնպէս ալ կիներու նկատմամբ, եւ այդ համակարգը պետք է մշակուած ըլլայ այնպէս, որ բացառէ սեռային յատկանիշներով ցանկացած խտրականութիւն:

25. Ինչպիսի՞ արտօնութիւններ եւ իրաւունքներ սահմանուած են ՀՀ Աշխատանքային օրէնսդրութեամբ յղի կիներուն համար

ՀՀ աշխատանքային օրէնսգիրքով աշխատող յղի կիներ ունին շարք մը իրաւունքներ եւ արտօնութիւններ: Անոնք են՝

- Յղի կիներ եւ մինչեւ մէկ տարեկան երեխայ խնամող աշխատողը կրնայ արտաժամեայ աշխատանքի ներգրաւուիլ միայն իրենց համաձայնութեամբ:
- Յղի կիներ եւ մինչեւ երեք տարեկան երեխայ խնամող աշխատողը կրնան գիշերային աշխատանքի ներգրաւուիլ միայն իրենց համաձայնութեամբ՝ նախնական բժշկական զննութիւն անցընելէն եւ գործատուին բժշկական եզրակացութիւն ներկայացնելէն ետք:
- Յղի կիներ եւ մինչեւ երեք տարեկան երեխայ խնամող աշխատողը կրնան տունը կամ կազմակերպութեան մէջ հերթապահութեան ներգրաւուիլ միայն իրենց համաձայնութեամբ:
- Յղի կիներ, մինչեւ մէկ տարեկան երեխայ խնամող աշխատողները կրնան հանգստեան օրերուն աշխատանքի ներգրաւուիլ միայն իրենց համաձայնութեամբ:

- Յղի կիներ, մինչև մեկ տարեկան երեխայ խնամող աշխատողները կրնան ոչ աշխատանքային՝ տոնական եւ յիշատակի օրերուն աշխատանքի ներգրավուիլ միայն իրենց համաձայնությամբ:
- Մինչև անընդմեջ աշխատանքի վեց ամիսը լրանալը աշխատողի խնդրանքով ամենամեայ արձակուրդ կը տրամադրուի կիներու յղութեան ու ծննդաբերութեան արձակուրդէն առաջ կամ ետք:
- Անընդմեջ աշխատանքի վեց ամիսը լրանալէ ետք ամենամեայ արձակուրդի ժամանակի ընտրութեան իրաւունք ունին յղի կիներ եւ մինչև 14 տարեկան երեխայ խնամող աշխատողը:
- Յղի կիներ եւ մինչև մեկ տարեկան երեխայ խնամող աշխատողը կրնան գործուղման ուղարկուիլ միայն իրենց համաձայնությամբ:
- Կ'արգիլուի Հայաստանի Հանրապետութեան օրէնսդրութեամբ սահմանուած ծանր, վնասակար, առանձնապէս ծանր, առանձնապէս վնասակար աշխատանքներու մէջ յղի կամ մինչև մեկ տարեկան երեխայ խնամող կիները ներգրաւելը:
- Գործատուն պարտաւոր է որոշել յղի եւ մինչև մեկ տարեկան երեխայ խնամող կիներու անվտանգութեան եւ առողջութեան վրայ ազդող վտանգաւոր գործօններու ազդեցութեան տեսողութիւնը եւ բնոյթը: Հնարաւոր ազդեցութեան առկայութիւնը որոշելէն ետք գործատուն պարտաւոր է վտանգաւոր գործօններու ազդեցութեան վտանգի վերացման նպատակով ձեռնարկել ժամանակաւոր միջոցներ (աշխատանքային պայմաններու փոփոխութիւն, այլ աշխատանքի փոխադրում նոյն կազմակերպութեան մէջ, այսպիսի հնարաւորութեան բացակայութեան պարագային վճարովի արձակուրդի տրամադրում՝ մինչև յղութեան եւ ծննդաբերութեան արձակուրդի յատկացումը):
- Եթէ յղի եւ մինչև մեկ տարեկան երեխայ խնամող կինը անհրաժեշտ է աշխատաժամանակի ընթացքին բժշկական հետազօտութեան անցընել, ապա գործատուն պարտաւոր է զայն ազատել աշխատանքային պարտականութիւններու կատարումէն՝ պահպանելով միջին աշխատավարձը, որ կը հաշուարկուի՝ հիմք ընդունելով միջին ժամային աշխատավարձի չափը,
- Ոչ լրիւ աշխատանքային օր կամ ոչ լրիւ աշխատանքային շաբաթ կրնայ սահմանուիլ յղի կնոջ եւ մինչև մեկ տարեկան երեխայ խնամող աշխատողի պահանջով,
- Երեխան կուրծքով կերակրող կնոջը մինչև երեխայի մեկուկէս տարին լրանալը, բացի հանգիստի եւ սնունդի համար տրամադրուող ընդմիջման ժամերէն, երեխան կերակրելու համար իւրաքանչիւր երեք ժամը մեկ կը տրամադրուի

լրացուցիչ ընդմիջում՝ կէս ժամէն ոչ պակաս տեւողութեամբ: Երեխան կերակրելու համար նախատեսուած ընդմիջումներու ժամանակահատուածին մէջ աշխատողը կը վարձատրուի միջին ժամային աշխատավարձի չափով

- Աշխատող կիներուն կը տրամադրուի յղութեան եւ ծննդաբերութեան արձակուրդ:

26. Արդեօք գործատուն իրաւունք ունի՞ լուծել աշխատանքային պայմանագիրը կնոջ յղութեան ընթացքին

Աշխատանքային պայմանագիրի լուծումը գործատուի նախաձեռնութեամբ կ'արգիլուի յղի կիներու հետ՝ յղութեան մասին գործատուին տեղեկանք ներկայացնելու օրէն մինչեւ յղութեան եւ ծննդաբերութեան արձակուրդի աւարտման օրէն ետք մէկ ամիսը լրանալը:

27. Քանի՞ օր կը կազմէ աշխատող կնոջը տրամադրուող յղութեան եւ ծննդաբերութեան արձակուրդը

Աշխատող կիներու կը տրամադրուի յղութեան եւ ծննդաբերութեան արձակուրդ՝

- 1) 140 օր (70 օր՝ յղութեան, 70 օր՝ ծննդաբերութեան).
- 2) 155 օր (70 օր՝ յղութեան, 85 օր՝ ծննդաբերութեան)՝ բարդ ծննդաբերութեան պարագային.
- 3) 180 օր (70 օր՝ յղութեան, 110 օր՝ ծննդաբերութեան)՝ միաժամանակ մէկէն աւելի երեխաներ ունենալու պարագային: